

ՀԱՅ ԸԼԼԱԼ ԹՈՒՐԹԻՈՅ ՄԷՋ ...

Posted on April 9, 2009 by keghart.com



Category: [Opinions](#)



Վահան Իսաօղլու, 30 Դեկտեմբեր 2008

Տարբեր զգացում մըն է Թուրքիոյ մէջ հայ ըլլալը...

Ճիշդ է որ Հրանդ Տիկնի սպանութենէն ետք, հազարաւոր մարդիկ պոռացին՝ «Մենք բոլորս հայեր ենք», բայց... կարգ մը շրջանակներ չհասկնալով այս կարգախօսը, որ կը նշանակէր՝ «Բոլորս մարդկային արարածներ ենք», այլ տարողութիւն տուին վէճերու, բայց...

Վահան Իսաօղլու, 30 Դեկտեմբեր 2008

Տարբեր զգացում մըն է Թուրքիոյ մէջ հայ ըլլալը...

Ճիշդ է որ Հրանդ Տիկնի սպանութենէն ետք, հազարաւոր մարդիկ պոռացին՝ «Մենք բոլորս հայեր ենք», բայց... կարգ մը շրջանակներ չհասկնալով այս կարգախօսը, որ կը նշանակէր՝ «Բոլորս մարդկային արարածներ ենք», այլ տարողութիւն տուին վէճերու, բայց...

Տարբեր զգացում մըն է Թուրքիոյ մէջ հայ ըլլալը...

Իրականութիւնը այն է, որ բաւարար չէ բարձրաձայն պոռալ հայ ըլլալու համար... Թուրքիոյ մէջ հայ ըլլալ՝ կը նշանակէ բարեկամներդ լսել՝ «Մեզի համով թոփիկ մը պատրաստէ, որ ուտենք»:

Հայ ըլլալ կը նշանակէ տեսնել տարօրինակ նայուածք մը՝ պետական պաշտօնեայի դէմքին վրայ, երբ պետական գրասենեակ մը կ'երթաս, եւ երբ կ'արտասանես քու անունդ, նոյնիսկ՝ անոր հեգնական արտայայտութիւնը, երբ ան քեզի կը հարցնէ՝ «Հա՞ն էս»: Կը նշանակէ, որ անունդ միշտ սխալ կը գրուի:

Հայ ըլլալ Թուրքիոյ մէջ՝ կը նշանակէ, որ երբ զինուորական ծառայութիւն կ'ընես, քու ընկերներդ քեզի կ'ըսեն՝ «Հաճիս արտասանէ Մոհամետի վկայութեան ուխտը»:

(Այդ նախադասութեան արտասանութեամբ կ'իսլամանան, իսկ այն իսլամը, որ կը յաջողի զայն արտասանել տալ «անհաւատ»ի մը, դրախտին կ'արժանանայ, կը քարոզեն Թուրքիոյ մոլլաները - «Ա.»):

Հայ ըլլալ Թուրքիոյ մէջ՝ կը նշանակէ, որ երբ ձեր զաւակը, կարդալէ ետք հակահայ գրութիւններ իր դպրոցական դասագիրքերուն մէջ, գայ եւ ձեզի հարցնէ հարցումներ, եւ դուք պատասխաններ չգտնէք անոնց...

Հայ ըլլալ Թուրքիոյ մէջ՝ կը նշանակէ, որ երբ բարեկամ մը ձեզի ուրիշներու ծանօթացնէ՝ ըսելով՝ «Հայ ընկեր մը», ստիպուած ըլլայ անեցնելու՝ «Բայց իրապէս լաւ անձ մըն է»:

Հակառակ ամէն ինչի, Թուրքիոյ մէջ հայ ըլլալ կը նշանակէ կարենալ սիրով երգել «թրքական դասական երգերը» խնճոյքի սեղանի մը շուրջ... (յօդուածագիրը կ'ակնարկէ թրքական դասական երգերուն, որոնց արմատները հայկական շարականներ են,

որովհետեւ անոնց հեղինակները մեծ մասամբ հայ եւ յոյն էին. արդի Թուրքիոյ մէջ այդ երգերը մեծ ժողովրդականութիւն չեն վայելեր, եւ անոնց կառչած է առաւելաբար պոլսահայութիւնը, հասկնալի պատճառներով - «Ա.»):

Հակառակ ամէն ինչի, դժուար կացութիւններու մէջ բարեկամներ քեզի կ'ըսեն՝ «Մի՛ նեղանար, տգետներ են, մենք քեզի կը ճանչնանք եւ կը սիրենք»...

Հայ ըլլալ՝ կը նշանակէ տատամսիլ, երբ անունդ կու տաս անծանօթի մը եւ զգուշութեամբ կը սպասես անոր հակազդեցութեան...

Հայ ըլլալ՝ կը նշանակէ բացատրութիւն գտնել, երբ հեռատեսիլէն նախարար մը «Հայկական ծագում» հայիոյանքը կը գործածէ՝ խօսելով ահաբեկչական կազմակերպութեան ղեկավարի մը մասին (ՔԱԿ-ի ղեկավար Ապտիլլա Էօճալան), եւ ձեր գաւակները կը լսեն այդ արտայայտութիւնը:

Թուրքիոյ մէջ հայ ըլլալ՝ կը նշանակէ այն հարցումները, որոնք ձեզի կ'ուղղուին ձեր տեսակետին մասին, երբ Ֆրանսայի մէջ օրէնքի մը քննարկումը տեղի կ'ունենայ... ստիպուած կ'ըլլաք «այսպէս ըսուած» բառը աւելցնելու ձեր պատասխանին առջեւ...

Թուրքիոյ մէջ հայ ըլլալ՝ կը նշանակէ չես կրնար պետական պաշտօնեայ ըլլալ, ոչ իսկ աղբահաւաք մը:

Հայ ըլլալ՝ կը նշանակէ գիտնալ, որ ձեր դպրոցներուն մէջ «զետեղուած» ուսուցիչներու ըսուած է. «Ուշադիր եղէք, դուք մեր ականջները եւ աչքերն էք...»:

Հայ ըլլալ՝ կը նշանակէ փորձել գտնել ոչ շատ վիրաւորական պատասխաններ, երբ ձեր գաւակները կ'երագն «քաղաքապետ» կամ «նստիկանապետ» ըլլալ... որովհետեւ Թուրքիոյ մէջ, հակառակ որ թուրք քաղաքացի էք, իրաւունք չունիք ոստիկան կամ պետական պաշտօնեայ ըլլալու, թէեւ Գերմանիա գաղթած թուրքերը կրնան...

Նաեւ կը նշանակէ, որ չես կրնար բանակին մէջ սպայ ըլլալ:

Հակառակ ամէն բանի, կը նշանակէ նաեւ, որ կրնաս դիտել «Հապապամ սինիֆի»ի նման ժողովրդական շարժանկարներ, կրնաս սիրել «չիյ քեօֆթէ»ն:

Կը նշանակէ՝ կրնաս մտածել... կրնաս արտադրել... կրնաս արուեստագետ ըլլալ...

Կը նշանակէ, որ ամէն անգամ, որ երկիրը ձգել երթալու միտքը կ'ունենաք, յանկարծ կը յիշէք, թէ որքան կը սիրէք այս երկիրը...

Կը նշանակէ աղանիի պէս սարսափահար մնալ...

Կը նշանակէ ստիպուած ըլլալ անունդ թաքցնելու ամէն անգամ, երբ կը հանդիպիս այնպիսի անձերու, որոնք մեծցած, դաստիարակուած եւ ուղեղալուացքի ենթարկուած են «Մալքոչօղլու»ի կամ «Թուրքան»ի նման հերոսապատումներով ու ժապաւեններով, որոնց մէջ «չարերը» միշտ տմարդի վախկոտ կղերականներ են կամ բռնաբարող յոյներ...

Հայ ըլլալը կը նշանակէ, որ հակառակ ամէն ինչի, ամէն առտու դպրոցին մէջ պէտք է հպարտօրէն երգել Թուրքիոյ ազգային քայլերգը եւ գոռալ, «Երանի անոր, որ կ'ըսէ՝ թուրք եմ», կը նշանակէ գոռալ, թէ երջանիկ թուրք մըն ես այն երկրին մէջ, ուր խօսքի իրաւունք չունիս:

Այն օրը, երբ հայկական ծագումով Թուրքիոյ քաղաքացի մը կրնայ պետական պաշտօնեայ ըլլալ, աստիճանաւոր զինուորական, այդ պահուն կրնամ հասկնալ, թէ կը համարուիմ լիիրաւ թուրք քաղաքացի:

Թուրքիոյ մէջ հայ ըլլալ՝ կը նշանակէ պէտք է միշտ փորձել մոռնալ որդեգիրի այն զգացումը, երբ կը լսես Էտիփ Աքպայրամի «Մի՛ նեղանար...» երգը: (Որդեգիրի համար գործածուած բառը՝ «պեշլեմէ», կը նշանակէ ծառայ տղեկ մը, որ տան մէջ կը պահուի, կը կերակրուի, բայց աշխատավարձ չի ստանար - «Ա».):

Թուրքիոյ մէջ հայ ըլլալ՝ կը նշանակէ, թէ անձանօթ մը վրադ պիտի յարձակի, երբ «Սարը կելին»ը (դեղին հարս) կ'երգես իր բուն՝ հայկական տարբերակով («Սարի աղջիկ»ը - «Ա.»): Կը նշանակէ քեզի պիտի պարտադրուի երգել թրքերէնի թարգմանուածը...

Անիկա երբեմն կը նշանակէ, թէ գետին պիտի փռուիս զոյգ մը ծակ կօշիկներով: (Յօդուածագիրը կ'ակնարկէ Հրանդ Տիւնքի, որուն սպաննուած վայրին մէջ լուսանկարներէն մէկը ցոյց կու տար դիակին կրած կօշիկներէն մէկուն ծակը - «Ա.»): Անիկա կը նշանակէ, թէ համոզումներդ, գաղափարներդ պաշտպանելու ատեն հաշուի պիտի առնես մինչեւ ծայր երթալ, մանաւանդ երբ կը սորվիս «Սարը կելին»ի իսկական, հայկական տարբերակը... («Սարի աղջիկ»ը «Ա.»):

Վերջապէս...

Պարզ հարց մը չէ Թուրքիոյ մէջ հայ ըլլալը...

Բայց հակառակ ամէն ինչի, անուշ է եւ տարբեր է...

Սիրոյ հարց է Թուրքիոյ մէջ հայ ըլլալը...

Հայ ըլլալ՝ կը նշանակէ, որ երբ ձեզի կ'ըսեն «սիրելիս, եթէ չես հաւնիր, կրնաս ձգել ու երթալ...», պէտք է կարենաս անոնց պատասխանել՝ «ասիկա նաեւ ի՛մ երկիրս է»:

